


ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Մարզկենտրոնը՝

ք. Գավառ

Տարածաշրջանները

Գավառ,
Սևան,
Մարտունի,
Վարդենիս,
Ճամբարակ



Քաղաքները՝

Գավառ,
Ճամբարակ,
Մարտունի,
Սևան,
Վարդենիս

Տարածքը	5 349 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	18.0 %
Համայնքներ, 2017թ. տարեկգրի դրությամբ	92
Քաղաքներ	5
Գյուղեր	93
Բնակչության թվաքանակը 2017թ. տարեկգրի դրությամբ	230.7 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	68.4 հազ. մարդ
գյուղական	162.3 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	7.7 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	29.6 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	345 528.0 հա
այդ թվում՝ վարելահողեր	81 725.9 հա

ՀՀ Գեղարքունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևելքում՝ շրջապատելով Սևանա լիճը:

Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Լոռու և Տավուշի մարզերին, արևելքից՝ պետական սահմանով, սահմանակից է Ադրբեջանին, հարավից՝ ՀՀ Վայոց ձորի մարզին, հարավ-արևմուտքից՝ ՀՀ Արարատի մարզին և արևմուտքից՝ ՀՀ Կոտայքի մարզին:

Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կազմում է 115 կմ, արևմուտքից արևելք՝ 85 կմ, ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է (Ձորավանք գյուղ, 1 325 մ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ լեռան գագաթը (3 598 մ):

Բարձր լեռներն են Սպիտակասարը (3 555 մ), Վարդենիսը (3 522 մ), Գեղասարը (3 446 մ): Ամենաերկար գետերն են Արզիճին (51 կմ), Գավառագետը (47 կմ) և Մասրիկը (45 կմ):

Ամենամեծ լիճը Սևանա լիճն է (1 278.7 կմ², բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1 900.52 մ), համեմատաբար փոքր լճերից են Աժդահակի և Աղմաղանի խառնարանային լճերը՝ մինչև 50 մ տրամագծով և 15 մ խորությամբ:

Մարզի տարածքով անցնում է Երևան-Սևան-Դիլիջան հանրապետական նշանակության մայրուղին: Գործում է Սելիմի լեռնանցքով անցնող «Հարավ-Հյուսիս» մայրուղին:

ՀՀ Գեղարքունիքի մարզում է գտնվում Սևանա լիճը, որը ոչ միայն մարզի, այլ նաև հանրապետության համար ունի առանձնահատուկ կարևորություն: Այն Հարավային Կովկասի քաղցրահամ ջրերի ամենամեծ ավազանն է: Լիճն էական ազդեցություն ունի ողջ մարզի ոչ միայն բնապահպանական հավասարակշռության, այլ նաև տնտեսության վրա:

Մարզի տարածքում է գտնվում «Սևան» ազգային պարկը (կազմավորվել է 1978թ.): Այն զբաղեցնում է Սևանի միջլեռնային գոգավորության հատակը կազմող Սևանա լճի և դրա հատակից ազատված տարածքները: Մակերեսը կազմում է 150.1 հազ.հա, որից 24.9 հազ.հա՝ առափնյա ցամաքային տարածքներ են: Լիճը շրջափակված է Արեգունու, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի և Սևանի լեռնաշղթաների լանջերով: Այստեղ պահպանվել են բույսերի 1 600 և կենդանիների 330 տարատեսակներ:

Մարզում են գտնվում բազմաթիվ հանքավայրեր, որոնցից են ոսկու, դոլոմիտի, բազալտի, ավազի, հրաբխային տուֆի հանքավայրերը: Շահագործվող հանքավայրերից մի մասին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող հանքաքարի զգալի մասը:

2016թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան հատվածների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 2.2 %,
- գյուղատնտեսություն 12.7 %,
- շինարարություն 4.0 %,
- մանրածախ առևտուր 1.7 %,
- ծառայություններ՝ 1.2 %:

Մարզի տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է, հատկապես հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները:

Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Կարևոր նշանակություն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքները, արտադրությունը:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Մարզկենտրոնը Գավառը (2017թ. տարեսկզբին՝ 19.1 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 92 կմ հեռավորության վրա: Քաղաքը նախկինում հանրապետության արդյունաբերական կենտրոններից էր, սակայն մի շարք խոշոր գործարանների աշխատանքների դադարեցման պատճառով արդյունաբերական արտադրանքի թողարկումն էապես կրճատվել է:

Այժմ տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն մեքենաշինության, շինանյութերի, թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերը:

Սևան քաղաքը (2017թ. տարեսկզբին՝ 19.1 հազ. բնակիչ, Երևանից 66 կմ հեռավորությամբ) գտնվում է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին: Տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը զբոսաշրջությունն է:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ

տեսակարար կշիռ ունեն շինանյութերի, քիմիական, սննդի և մեքենաշինության արդյունաբերության արտադրությունները:

Մարտունի քաղաքը (2017թ. տարեկգրին՝ 12.0 հազ. բնակիչ) գտնվում է Սևանա լճի հարավ-արևմտյան ափին (Երևանից 130 կմ հեռավորության վրա): Տնտեսության գլխավոր ճյուղն արդյունաբերությունն է, թեև վերջին տարիներին արձանագրվել է թողարկվող արտադրանքի ծավալների զգալի կրճատում:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն մեքենաշինության, շինանյութերի, քիմիական և սննդի արդյունաբերության ճյուղերը:


Վարդենիս քաղաքի (2017թ. տարեկգրին՝ 12.5 հազ. բնակիչ, Երևանից 168 կմ հեռավորության վրա) առաջատար ճյուղն արդյունաբերությունն է: Ընդլայնման մեծ հեռանկարներ կան հատկապես հանքավայրերի շահագործման և գյուղատնտեսական մթերքի վերամշակման ուղղություններում:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

Ճամբարակ քաղաքի (2017թ. տարեկգրին՝ 5.7 հազ. բնակիչ) տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է (Երևանից 119 կմ հեռավորության վրա): Արդյունաբերությունը համեմատաբար թույլ է զարգացած:

Ճամբարակի տարածաշրջանում է գտնվում մարզի բնական անտառների ավելի քան 90%-ը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՍԲԵՐԻ, 2017թ. հունվարի 1-ի դրությամբ



ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

	Քանակը				
	2012	2013	2014	2015	2016
Մանրածախ առևտրի օբյեկտներ, րնդամենը	476	443	498	551	532
այդ թվում՝					
խանութներ	269	239	288	333	339
կրպակներ	144	140	144	121	98
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	2	2	2	2	1
սպառողական ապրանքների շուկաներ	2	2	2	2	2
առևտրի այլ օբյեկտներ	59	60	62	93	92

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Քանակը				
	2012	2013	2014	2015	2016
Պետական նախադպրոցական	42	42	44	42	42
Պետական հանրակրթական	126	126	126	126	126
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	17	17	15	15	15
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ¹	3	3	3	3	4
Պետական միջին մասնագիտական ուսումնական	7	8	8	7	7
Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	1	1	1	1	1
Պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1

ՔԱՂԱՔՆԵՐ

Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ *
Գավառ	19 069
Սևան	19 103
Մարտունի	11 960
Վարդենիս	12 550
Ճամբարակ	5 691

¹ Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

* ՀՀ մարզերի քաղաքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ:

ԳՑՈՒՂԵՐ

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
Գավառի տարածաշրջան		
1	Բերդկունք	300
2	Գանձակ	4 242
3	Գեղարքունիք	1 922
4	Լանջաղբյուր	2 531
5	Լճափ	1 155
6	Ծաղկաշեն	593
7	Ծովագարդ	2 207
8	Կարմիրգյուղ	6 298
9	Հայրավանք	901
10	Նորատուս	6 100
11	Սարուխան	8 369
Կրասնոսելսկի տարածաշրջան		
1	Աղբերք	319
2	Այգուտ	910
3	Ճապկուտ	-
4	Անտառամեջ	161
5	Արտանիշ	605
6	Արծվաշեն	-
7	Գետիկ	469
8	Դայրաբակ	593
9	Դրախտիկ	1 006
10	Թթուջուր	1 117
11	Կայավան	102
12	Բարեպատ	48
13	Ջորավանք	140
14	Մարտունի	583
15	Շորժա	563
16	Ջիլ	665
17	Վահան	1 130
Մարտունու տարածաշրջան		
1	Աստղաձոր	4 659
2	Արծվանիստ	3 300
3	Գեղհովիտ	6 106
4	Նշխարք	-
5	Լեռնակերտ	285
6	Երանոս	5 512
7	Ջոլաքար	6 756
8	Լիճք	5 247
9	Ծակքար	2 908
10	Ծովասար	3 029
11	Ծովինար	5 161
12	Ջորագյուղ	4 647
13	Մաղինա	1 147
14	Ներքին Գետաշեն	8 663
15	Վաղաշեն	4 337
16	Վարդաձոր	3 036
17	Վարդենիկ	8 658
18	Վերին Գետաշեն	4 784
Սևանի տարածաշրջան		
1	Գագարին	1 348
2	Գեղամավան	2 067
3	Դոմաշեն	2 808
4	Զովաբեր	1 576

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
5	Լճաշեն	4 875
6	Ծաղկունք	1 088
7	Ծովագյուղ	4 420
8	Նորաշեն	472
9	Զկալովկա	516
10	Սեմյոնովկա	251
11	Վարսեր	2 019
Վարդենիսի տարածաշրջան		
1	Ագատ	136
2	Ախպրաձոր	397
3	Ակունք	4 188
4	Այրք	538
5	Ավազան	198
6	Արեգունի	361
7	Արփունք	587
8	Գեղամաբակ	126
9	Գեղամասար	1 083
10	Գեղաքար	167
11	Դարանակ	204
12	Զառիվեր	-
13	Լճավան	582
14	Լուսակունք	1 561
15	Խաչաղբյուր	1 329
16	Ծափաթաղ	347
17	Ծովակ	2 904
18	Կախակն	488
19	Կարճաղբյուր	2 541
20	Կույթ	168
21	Կուտական	285
22	Մաքենիս	532
23	Մեծ Մասրիկ	3 459
24	Ներքին Շորժա	81
25	Նորաբակ	271
26	Նորակերտ	1 024
27	Շատջրեք	462
28	Շատվան	445
29	Զաղացաձոր	155
30	Սոթք	972
31	Վանևան	328
32	Վերին Շորժա	110
33	Տորֆավան	514
34	Տրետուք	215
35	Փամբակ	533
36	Փոքր Մասրիկ	800

*

** ՀՀ մարզերի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղերի կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 952 գյուղական բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2017թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +13.8%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2016թ.

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղա-մարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10 000	4 980	5 020
Ծնվածներ, մարդ	131	59	72
Մահացածներ, մարդ	83	40	43
Ամուսնություններ	46	X	X
Ամուսնալուծություններ	6	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	31.1	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	134	65	69
հանրակրթական	1 240	569	671
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	124	76	48
նախնական մասնագիտական (արհեստագործական)	21	4	17
միջին մասնագիտական	51	30	21
բարձրագույն մասնագիտական	63	32	31
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	34 261
Մարզիկներ, մարդ	75	4	71
Զբաղվածներ, մարդ	2 742	1 326	1 416
նրանցից՝ զիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ զիտության դոկտոր	-	-	-
զիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	149	119	30
բժիշկներ	14
միջին բուժանձնակազմ	41
Գործազուրկներ, մարդ	121	44	77
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 371	809	562
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	578	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	13 604
թատրոն	56
համերգ	-	-	-
թանգարան	130
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	36	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	18	X	X
միջին ծանրության	14	X	X
ծանր	4	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X

¹ Ցուցանիշները հաշվարկային են:
The indicators are accountable.